Առողջապահական թափոնի կառավարման պլան

Առողջապահական թափոնի անվտանգ և արդյունավետ կառավարման ծրագրեր ապահովելու համար կարևորագույն քայլ են համարվում պարտականությունների նշանակումը, թափոնի կառավարման ծրագրի մշակումը, և այդ ծրագրի իրականացումը.

1. Պարտականությունների նշանակում

Հիվանդանոցի ղեկավարը պետք է ձևավորի **թափոնի կառավարման հարցերով զբաղվող թիմ՝** թափոնի կառավարման ծրագիր մշակելու նպատակով:
Հիվանդանոցի ղեկավար (որպես նախագահող կամ նրանց կողմից նշանակված անձ՝ թափոնի կառավարման հարցերով զբաղվող պատասխանատու անձ)
Հիվանդանոցի բաժանմունքների ղեկավարներ
Վարակի դեմ պայքարի գծով պատասխանատու անձ/ Համաճարակաբան
Գլխավոր դեղագործ
Ճառագայթման կաբինետի պատասխանատու անձ
Ավագ բուժքույր
Հիվանդանոցի ինժեներ
Ֆինանսական վերահսկիչ

2. Թափոնի կառավարման ծրագրի մշակում

- Ներկա իրավիճակ (թափոնի կառավարման գործողություններ, ներգրավված անձնակազմ և սարքավորում)
- Թափոնի առաջացման ներկա քանակություններ
- Թափոնի մշակման և հեռացման տարբերակների (հաստատության ներսում և հաստատությունից դուրս) գնահատում
- Հաստատության ներսում թափոնի տարանջատման, փոխադրման, և պահման գործողություններին ծանոթացում
- Թափոնի նվազեցման, կրկնակի օգտագործման, և վերամշակման հնարավորությունների գնահատում

3. Առողջապահական թափոնի կառավարման ծրագրի իրականացում

4. Առողջապահական թափոնի քանակի նվազեցում

Առողջապահական թափոնի քանակի նվազեցում իրականացվում է թափոնի առաջացման տեղում: Բաղադրիչներն են.

- տարաբաժանում

- թափոնի գոյացման աղբյուրի նվազեցում (վտանգավոր նյութից ապրանքի փոխարինում)
- հումքի վերամշակում կամ կրկնակի օգտագործում (թափոնի վերամշակում, վերամշակվող ապրանքի գնում)
- օրգանական թափոնների կոմպոստացում
- համապատասխան հեռացում